

Կ ա ր ծ ի ք

Անժելա Բսրայելի Մինասյանի «Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» խորագրով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /մաթեմատիկա/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայրենական դպրոցի զարգացման ժամանակակից փուլում ավելի սուր է նկատվում ուսուցման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Բարեփոխումների ընթացքը, որը ծավալվում է ՀՀ կրթական համակարգում՝ որակական, քանակական և կառուցվածքային փոփոխությունների առումով, հրամայաբար պահանջում է նաև հանրակրթական դպրոցի կառուցվածքային փոփոխություն, կրթական ծրագրերի բարեփոխում, առանձին ուսումնական առարկաների բովանդակության և մեթոդաբանության արդիականացում:

Անժելա Բսրայելի Մինասյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հանրակրթական դպրոցում մաթեմատիկայի կարևորագույն և արդիական բաժիններից՝ հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունների բացահայտմանը և դրա հիման վրա ՀՀ-ում կիրառելի, տեսականորեն հիմնավորված, արդյունավետ մեթոդական համալիրի մշակմանը: Այն նպատակադիր է բարելավելու ու վերակառուցելու հանրակրթական միջին և ավագ դպրոցներում «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի ստոխաստիկական բաղադրիչի բովանդակությունն ու ուսուցման մեթոդիկան:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման և հիմնախնդիրը չափազանց արդիական են: Դրանց շուրջ իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները կարևոր են, իսկ այդ ուղղությամբ մեթոդական երաշխավորությունները պահանջված: Մինասյանն իր ուսումնասիրություններն իրականացրել է նախատեսված խնդիրների շրջանակում. ներկայացրել է միջին և ավագ դպրոցներում ստոխաստիկական նյութի դասավանդման առանձնահատկությունները և առաջարկել է այդ առանձնահատկություններին համապատասխանող բովանդակություն, մշակել և փորձարկել է ստոխաստիկայի տարրերի ուսուցման արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համալիր, ամփոփել է փորձարարության արդյունքները:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը համակարգչային հավաքի 167 էջ է:

Ներածությունում հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունը: Ատենախոսը, ընդունված չափանիշներին համապատասխան, ներկայացրել է իր ատենախոսության թեմայի շուրջ իրականացրած ուսումնասիրությունների նպատակը, վարկածը, խնդիրները, գիտական նորույթը, օբյեկտն ու առարկան: Ներկայացված են նաև հետազոտության մեթոդաբանական հիմքերը, տեսական և գործնական

նշանակությունը, հետազոտության փորձարարական բազան, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի իրականացման փուլերը: Առաջադրվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, որոնք աշխատանքում ստացել են համապատասխան բացահայտումներ:

Ատենախոսն ուսումնասիրել է ատենախոսության հիմնախնդրին առնչվող մասնագիտական և հոգեբանամանկավարժական լայնածավալ գրականություն, դիտարկել է դրանցում ներկայացված մոտեցումները, իր հետազոտության նպատակի և խնդիրների տեսանկյունից դրանք համադրել է ուսումնասիրության արդյունքներին և կատարել է համապատասխան եզրակացություններ: Այս իմաստով աշխատանքի արժանիքներից ենք համարում ատենախոսի ուսումնասիրած գրականության մեջ հեղինակի կողմից ատենախոսի արձարձած մտքերի տեսությունների գրագետ և դիպուկ վերլուծությունները, հիմնախնդրի տեսանկյունից մեջբերումների դիտարկումն ու բովանդակության հետ դրանց տրամաբանական առընչությունները:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում ստոխաստիկայի տարրերի ներառման տեսական վերլուծությանը: Ատենախոսը գիտականորեն հիմնավորել է, որ հանրակրթական դպրոցի մաթեմատիկա ուսումնական բնագավառի առարկաների բովանդակության մեջ ստոխաստիկայի տարրերի ներառումը կարող է ապահովել սովորողների հավանականային մտածողության զարգացում և էապես կարող է բարձրացնել մաթեմատիկայի ուսուցման արդյունավետությունը:

Չեղինակը հանգամանորեն անդրադարձել է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի ուսուցման միջազգային և հայրենական փորձին: Վերլուծելով միջազգային փորձը՝ ատենախոսը փաստում է, որ զարգացող և զարգացած մի շարք երկրների ուսումնական ծրագրերում ստոխաստիկայի տարրերը ներկայացված են պատշաճ մակարդակով դեռևս անցյալ դարի կեսերից: Անդրադառնալով 22 կրթական տիրույթին և մասնավորապես վերջին երկու տասնամյակի կրթական զարգացումներին, կատարելով _ ինքնուրույն ուսումնասիրություններ՝ ատենախոսը եզրակացրել է, որ դպրոցականների ստոխաստիկական գրագիտության մակարդակն այնքան էլ բարձր չէ: Ուսումնասիրելով մաթեմատիկայի առարկայական չափորոշիչներում, հանրակրթական ծրագրերում և գործող ու նախկին դասագրքերում ստոխաստիկայի ներառման ծավալները հեղինակը մատնանշում է, որ եթե ստոխաստիկայի տարրերն անհրաժեշտ ծավալով չներառվի դպրոցական դասագրքերի մեջ, ապա թերուսուցման առկա վիճակն անհնար կլինի հաղթահարել: Չեղինակն անդրադարձել է նաև մաթեմատիկայի դպրոցական դասընթացում ստոխաստիկայի տարրերի ներառման և դրանց ուսուցման մեթոդամանկավարժական խնդիրներին, ինչպես նաև ստոխաստիկայի տարրերի ուսուցման և ստոխաստիկական նյութի ընկալման հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակն անդրադարձել է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի ուսուցման արդյունավետության բարձրացման, դասավանդման մեթոդիկայի կատարելագործման ուղիների ուսումնասիրությանը: Խնդիր է դրված այն իրագործել

ստոխաստիկական բաղադրիչի բովանդակության ընդլայնման և ուսուցման արդյունավետ մեթոդական համալիրի մշակման միջոցով, որը ներառում է ուսուցման նպատակները, սկզբունքները, մեթոդները և ռազմավարությունը:

Ատենախոսը մանրագնին ներկայացրել է ստոխաստիկայի տարրերի դասավանդման առանձնահատկությունները, կապված կիրառական ուղղվածության, ներառարկայական և միջառարկայական կապերի, գեղագիտական գրավչության, սովորողների հավանականային մտածողության զարգացման հետ, իր մշակված մեթոդական համալիրի էությունը, փորձարարական աշխատանքների ընթացքն ու արդյունքները, հիմնավորել է առաջարկված բովանդակության անհրաժեշտությունը և մեթոդների կիրառման գործընթացի քայլերը: Ապացուցել է փորձարարական ուսուցման արդյունքում սովորողների ստոխաստիկական կոմպլեքսային գարգացման միտումը, որն էլ եղել է ատենախոսության թեմայի շուրջ իրականացվող ուսումնասիրությունների նպատակը:

Ատենախոսը հիմնավորել է նաև մաթեմատիկական կրթության մեջ ստոխաստիկայի տարրերի ներառմամբ սովորողների գեղագիտական դաստիարակության, արժեհամակարգի ձևավորման հնարավորությունը:

Պետք է փաստեն, որ հիշյալ բոլոր խնդիրները ներկայացված ու վերլուծված է բավականաչափ գրագետ ու հետևողականորեն՝ մշտապես աչքի առաջ ունենալով ատենախոսության գլխավոր վարկածը:

Դրական գնահատելով ատենախոսի իրականացրած ուսումնասիրությունների ընթացքն ու արդյունքները՝ ներկայացնենք որոշ դիտողություններ.

1. Առաջին դիտողությունը վերաբերում է ատենախոսության վերնագրով պայմանավորված անճշտությանը. ատենախոսության վերնագրում նշված է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում, սակայն բովանդակության մեջ հիմնախնդիրը դիտարկվում է միայն հանրակրթական միջին և ավագ դպրոցներում:
2. Ատենախոսությունն ունի որոշակի լեզվական անհարթություններ և անճշտություններ: Մասնավորաբար ատենախոսության շարադրանքում Մինասյանը գործածել է մի շարք օտարալեզու եզրույթներ, որոնց հայերեն տարբերակներն առկա են մեր բառապաշարում և ընդունված գիտական ոլորտում: Օրինակ՝ կոմբինատորիկա, դինամիկա և այլն: Շահեկան կլիներ ատենախոսության մեջ գործածել նշված և այլ եզրույթների հայերեն տարբերակները:
3. Աշխատանքում կան տեխնիկական վրձիպակներ /էջ 55-ի ներքևից 9-րդ տող, էջ 59-ի վերևից 9-րդ տող, էջ 63-ի վերևից 6-րդ տող և այլն/:
4. Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակն առանձնացրել և առաջարկել է ստոխաստիկական նյութի ուսուցման նոր, ընդլայնված բովանդակություն: Կարծում ենք ուսումնասիրությունը կշահեր, եթե հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի ուսուցման ընդլայնված բովանդակության ներառման առաջարկը մաթեմատիկական ծրագրերում ոչ միայն

հիմնավորվել դրա անհրաժեշտությամբ, ինչը հաջողվել է ատենախոսին, այլ նաև ներառել օրինակելի ծրագրի առաջարկ:

5. Գրականության ցանկում մի շարք համարների տակ էջերը նշված չեն, մասնավորաբար 147, 148, 151, 154, 155, 160, 163, 165, 166, 167, 169:

Ատենախոսության վերաբերյալ վերոնշյալ դիտողությունները բնավ չեն ստվերում կատարված աշխատանքի գիտականությունն ու արժեքը: Ատենախոսն իր հիմնախնդրի շուրջ ուսումնասիրությունների ընթացքում դրսևորել է ինքնուրույնություն, տիրապետում է քննարկվող ոլորտի հիմնախնդիրներին: Ուսումնասիրության արդյունքները, դրանց հիման վրա կատարված եզրակացությունները, մշակված մեթոդական ցուցումներն ու երաշխավորությունները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցներում և մաթեմատիկա դասավանդող ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համակարգում: Ատենախոսի հրատարակած թվով 21 հոդվածները և ատենախոսության սեղմագիրն արտացոլում են ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները:

Եզրակացություն

Գրախոսվող ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Անժելա Իսրայելի Մինասյանի « Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերի դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում » խորագրով թեկնածուական ատենախոսությունն արդիական, ավարտուն, գործնական նշանակություն ունեցող, ինքնուրույն հետազոտություն է, կատարված գիտական պատշաճ մակարդակով, բավարարում է ԲՈԿ-ի պահանջներին, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետ պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» /մաթեմատիկա/ մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների

թեկնածու՝

Ս. Հայրապետյան

Գ. Ս. Հայրապետյանի ստորագրությունը

Խ. Արովյանի անվան ՀՊՄՆ-ի գիտքարտիչի ստորագրությունը



« 04 » 12 2020 թ.